



**ԷԼԵԿՏՐՈՆԱԶԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. Ներածություն

Սույն ընդհանուր դրույթները և պայմանները (այսուհետ՝ Ընդհանուր Պայմաններ) սահմանում են «Իգի Փեյ» ՍՊԸ՝ որպես էլեկտրոնային վճարային համակարգի օպերատորի (այսուհետ՝ նաև՝ Համակարգի Օպերատոր) կողմից ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնակատերերին (այսուհետ՝ նաև՝ Հաճախորդ և /կամ Օգտագործող) «Իգի Փեյ» էլեկտրոնային վճարային համակարգի միջոցով ծառայությունների մատուցման կարգն ու կանոնները:

Սույն Ընդհանուր Պայմանները սահմանվում են «Իգի Փեյ» ՍՊԸ կողմից և հանդիսանում են հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկ:

Հաճախորդին «Իգի Փեյ» էլեկտրոնային վճարային համակարգում գրանցելու և Հաճախորդի համար Հաշիվ ակտիվացնելու պահից սույն Ընդհանուր Պայմանները համարվում են ակցեպտավորված /հաստատված/ Հաճախորդի կողմից, և այդ պահից ի վեր սույն Ընդհանուր Պայմանները՝ Ծառայություններից Օգտվելու Կանոնների և Սակագների հետ մեկտեղ, կազմում են Օպերատորի և Հաճախորդի միջև կնքված՝ կատարման համար պարտադիր պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Ակցեպտավորելով սույն Ընդհանուր Պայմանները՝ Հաճախորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է, ողջ ծավալով անվերապահորեն ընդունում է և համաձայն է սույն Ընդհանուր Պայմանների, Ծառայություններից Օգտվելու Կանոնների ու Սակագների հետ, որոնց գործող տարբերակները գտնվում են «Իգի Փեյ» ՍՊԸ պաշտոնական ինտերնետային կայքում, «Իգի Փեյ» ՍՊԸ կողմից շահագործվող «Easy Wallet» բջջային հավելվածում և/կամ ներկայացված են վերջինիս մասնաճյուղերում:

2. Սահմանումներ

2.1. «Իզի Փեյ» էլեկտրոնային վճարային համակարգ կամ «Իզի Փեյ» ԷՎՀ կամ «Համակարգ»՝ առցանց վճարային գործիք, ինչպես նաև, Համակարգի Օպերատորին սեփականության և/կամ վարձակալության իրավունքով պատկանող սարքավորումների և ծրագրերի ամբողջություն, որն օգտագործվում է ինտերնետ միջավայրում առցանց գործառնություններ կատարելու համար և որի միջոցով Համակարգի Օպերատորն ապահովում է ծառայությունների մատուցումը Օգտագործողի համար: «Իզի Փեյ» ԷՎՀ-ում ունենալով «Իզի Ուալլեթ» Հաշվառման Հաշիվ և համապատասխան կանխավճար՝ Օգտագործողը հնարավորություն է ստանում Համակարգի Օպերատորին հանձնարարել Օգտագործողի անունից ձեռք բերել որոշակի ապրանք կամ ծառայություն: Համակարգի Օպերատորը Օգտագործողի ունեցած կանխավճարի հաշվին վերջինիս անունից կատարում է վճարումներ:

2.2. «Իզի Ուալլեթ» Հաշվառման Հաշիվ, ԷՎՀ հաշվառման հաշիվ կամ Հաշիվ՝ «Easywallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապահակով Համակարգի Օպերատորի կողմից վարվող հաշվառման վիրտուալ հաշիվ, որն օգտագործվում է Հաճախորդի կողմից էլեկտրոնային Փողի ձեռքբերման և էլեկտրոնային Փողով կատարված գործառնությունների հաշվառման համար: Հաշվի դրական մնացորդն արտահայտվում է Հաճախորդի նկատմամբ Համակարգի Օպերատորի պարտավորության չափը:

2.3. Համակարգի Օպերատոր՝ «Իզի Փեյ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (պետական գրանցման համարը՝ 290.110.795290, ՀՎՀՀ՝ 0225850):

2.4. Հաճախորդ կամ Օգտատեր կամ Օգտագործող՝ Ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Համակարգի Օպերատորի հետ կնքած պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն, Համակարգում մատուցվող ծառայություններից օգտվելու և/կամ ապրանքներ ձեռք բերելու իրավունք է ստանում և այդ նպատակով կարող է օգտագործել նաև Համակարգի Օպերատորի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների հիման վրա իր կողմից ձեռք բերված էլեկտրոնային փողը:

2.5. Ծառայություն մատուցող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը Համակարգի Օպերատորի հետ կնքված պայմանագրի և Համակարգի Կանոնների համաձայն համաձայնել է քաղաքական էլեկտրոնային փողը որպես վճարամիջոց ընդունել իր կողմից մատուցվող ծառայությունների և/կամ իրացվող ապրանքների և/կամ կատարվող աշխատանքների դիմաց:

2.6. Երբորդ անձ՝ Օգտագործող չհանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, որը կարող է որևէ ֆալսաֆախարակական հարաբերությունների մեջ զտնվել Հաճախորդի հետ:

2.7. Վնաս՝ Վնասներ են իրավունքը խախտված անձի/Հաճախորդի, Ծառայություն մատուցողի, Համակարգի Օպերատորի կամ երբորդ անձանց/ ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար ֆալսաֆախարակական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց քաղնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:

2.8. Ծառայություններից Օգտվելու Կանոններ՝ սույն պայմանագրում և «Իզի Փեյ» ԷՎՀ-ի ինտերնետային կայքէջում պարունակվող կանոններ:

2.9. Լիցենզավորված գումար կամ Կանխավճար՝ Պայմանագրով նախատեսված վճարման գումար, որը Օգտագործողը վճարում է Համակարգի Օպերատորին, և որի դիմաց Համակարգի Օպերատորը լիցենզավորում է Օգտագործողի «Իզի Ուալլեթ» հաշվառման հաշիվը: Լիցենզավորումը կատարվում է 1 փոխարժեքով՝ այսինքն մեկ ՀՀ դրամի դիմաց օգտագործողի հաշվառման հաշիվը լիցենզավորվում է մեկ միավորով/ՀՀ դրամով:

2.10. «Իզի Ուալլեթ» Միավորներ՝ «Իզի Փեյ» ԷՎՀ-ի շրջանակներում ինտերնետային վճարման միջոց հանդիսացող միավորներ: 1 /մեկ/ «Իզի Ուալլեթ» միավորը համարժեք է 1 /մեկ/ ՀՀ դրամի:

2.11. Գաղտնաբա՝ Օգտագործողի կողմից ստեղծվող թվերի և տառերի համակցություն, որը «Իզի Փեյ» ԷՎՀ-ի կողմից օգտագործվում է որպես Օգտագործողի նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել «Իզի Փեյ» ԷՎՀ և օգտվել «Իզի Փեյ» ԷՎՀ-ում գետեղված Ծառայություններից:

2.12. Փին՝ Քառանիշ թվերի հաջորդականություն, որը Համակարգի Օպերատորի կողմից օգտագործվում է որպես Օգտագործողի նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել «Իզի Փեյ» ԷՎՀ և օգտվել «Իզի Փեյ» ԷՎՀ-ում գետեղված Ծառայություններից:

2.13. Սակագներ՝ Համակարգի Օպերատորի կողմից սահմանված սակագներ, որոնց համաձայն միջնորդավարներ են գանձվում են Հաճախորդից մատուցվող Ծառայությունների դիմաց:

2.14. Պատժանական կալ՝ Համացանցում գետեղված «Իզի Փեյ» ՍՊԸ պատժանական կալքը:

2.15. Բջջային հեռախոսահամար՝ Հաճախորդի կողմից իր բջջային հեռախոսահամարը՝ որպես հաշվի նույնականացուցիչ, օգտագործելու դեպքում բջջային օպերատորի կողմից տրամադրված GSM համար:

2.16. Բջջային հավելված՝ Android կամ iOS օպերացիոն հեղճերի հիման վրա մշակված հավելված, որի միջոցով հասանելի է դառնում Հաշվի կառավարումը, Ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Հաճախորդի և Համակարգի Օպերատորի միջև տեղեկատվության /այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների/ փոխանակումը:

3. Ծառայություններ

- 3.1. Համակարգի Օպերատորը, համաձայն գործող Սակագների մատուցում է Ծառայություններ, իսկ Հաճախորդն օգտվում է Ծառայություններից՝ գործող օրենսդրության, համակարգի կանոնների և Պայմանագրի պայմանների համաձայն:
- 3.2. Օգտատիրոջը հասանելի Ծառայությունների տեսակներն են՝
- 3.2.1. Հաշվի բացում,
 - 3.2.2. Հաշվի ընթացիկ սպասարկում,
 - 3.2.3. Հաշվի համալրում,
 - 3.2.4. Էլեկտրոնային Փողերի փոխարկում/մարում,
 - 3.2.5. մուտքային և ելքային փոխանցումներ,
 - 3.2.6. վճարումներ Ծառայություն Մատուցողներին,
 - 3.2.7. Հաշվի մնացորդի և կատարված գործառնությունների մասին տեղեկատվության տրամադրում,
 - 3.2.8. Պաշտոնական կայքում նկարագրված այլ ծառայություններ:

- 3.3. Ծառայությունները հասանելի են 24/7 և առցանց ռեժիմով: Ծառայությունների տեսակները, դրանց մատուցման եղանակները, հնարավոր գործառնությունները, ժամկետները գետեղվում են ԻՎՀ-ի տիրույթում, պաշտոնական կայքի հրապարակային մասում և ներկայացվում են Համակարգի Օպերատորի մասնաճյուղերում:

4. Օգտատերերի նույնականացում, Հաշվի կառավարում, Հաշվով կատարվող գործառնություններ

- 4.1. Համակարգի Օպերատորի կողմից այլ բան սահմանված չլինելու և/կամ ծրագրային արտոնություններ չսահմանելու դեպքում՝ Հաճախորդը կարող է ունենալ միայն մեկ գործող գրանցում Համակարգում և, համապատասխանաբար, մեկ գործող «Իգի Ուալլեթ» հաշվառման հաշիվ: Եթե Համակարգի Օպերատորը պարզում է, որ միևնույն անձի համար Համակարգում բացվել են մեկից ավելի հաշիվներ, ապա Համակարգի Օպերատորը կարող է ծանուցմամբ անմիջապես դադարեցնել համապատասխան Պայմանագրերից որևէ մեկը կամ բոլորը:
- 4.2. ԻՎՀ-ի տիրույթում հաշվառման հաշվի գրանցման համար անհրաժեշտ է Հաճախորդին պատկանող բանկային հաշվի կցում Հաշվառման հաշվին: Սույն կետի խմատով, Հաշվառման հաշիվը համարվում է գրանցված բացառապես Հաճախորդին պատկանող բանկային հաշիվը Հաշվառման հաշվին կցելու պայմաններում: ԻՎՀ-ի բջջային հավելվածի և/կամ «վեբ» տարբերակի ներբեռնման, գործարկման, անձը հաստատող փաստաթղթի միջոցով նույնականացում անցնելու գործողությունները կատարելու, սակայն բանկային հաշիվ չկցելու դեպքում ԻՎՀ-ի Հաշվառման հաշիվ ըստ էության չի ձևավորվում:
- 4.2.1. Սույն կանոնների 4.2 կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքում ԻՎՀ-ի բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած և/կամ ԻՎՀ-ի «վեբ» տարբերակով մուտքագրման դեպքում հնարավորություն է ստեղծվում ծանոթանալու ԻՎՀ-ի տիրույթին, մատուցվող ծառայություններին և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկություններին, սակայն գործարք կատարել հնարավոր չէ:
- 4.2.2. Սույն կանոնների 4.2 կետով սահմանված կարգով բանկային հաշիվ կցած Հաճախորդը համարվում է ԻՎՀ-ի Հաշվառման հաշիվը պատշաճ գործարկած և հասանելիություն է ստանում ԻՎՀ-ով գործարքներ կատարելուն: Ընդ որում, ժամանակի ցանկացած պահի սույն կետով սահմանված հաշվառման հաշիվը ադակցագրելու կամ այլ ձևով հեռացնելու դեպքում Հաճախորդի կարգավիճակն ինքնաշարժ կարգով համապատասխանեցվում է սույն կանոնների 4.2.1 կետով սահմանված պայմաններին: Սույն կանոնների 4.2 կետով սահմանված կարգով Հաշվառման հաշվի գրանցումից հետո Հաշվառման հաշվին կարող են կցվել նաև այլ բանկային հաշիվներ:
- 4.2.3. ԻՎՀ-ի միջոցով գործարքներ կատարելու պայմանների, գործարքների չափերի, Հաշվառման հաշվի մնացորդի առավելագույն չափի և Հաշվառման հաշվի օգտագործման համար անհրաժեշտ պայմանների մասին Հաճախորդը ծանուցվում է ԻՎՀ-ի Հաշվառման հաշվի միջոցով:
- 4.3. ԻՎՀ-ի բջջային հավելվածը ներբեռնելուց և գործարկելուց հետո Օգտատերը որպես լրացուցիչ գործիք ինքնաշարժ կերպով ստանում է առցանց նույնականացվելու հրահանգը: Օգտատիրոջ նույնականացման համար անհրաժեշտ է վերջինիս կողմից անձը հաստատող փաստաթուղթը լուսանկարել տվյալ բջջային հեռախոսում ներկառնված տեսախցիկի միջոցով՝ ապահովելով լուսանկարներում առկա պատկերների հստակությունը և տեխստի ընթերցելի լինելը (ՀՀ հին նմուշի անձնագրի պարագայում անհրաժեշտ է լուսանկարել անձնագրի MRZ պարունակող լուսանկարով և հաշվառման հասցեի նշումով էջերը, կենսաչափական անձնագրի դեպքում՝ MRZ պարունակող լուսանկարով էջը, նույնականացման ֆաբտի դեպքում՝ երկու կողմերը):
- 4.4. Օգտատիրոջ կողմից սույն գլխի 3.3 կետում նշված լուսանկարները ներբեռնելուց հետո Համակարգի Համակարգի Օպերատորը «Էլեկեգ»

ՓԲԸ-ի կողմից կառավարվող «ԷԿԵՆԳ» խկորոշման համակարգի համապատասխան տվյալների բազաների միջոցով ստանում է Օգտատիրոջ նույնականացման համար անհրաժեշտ բոլոր տվյալները՝ ըստ Օգտատիրոջ կողմից ներբեռնված լուսանկարներին առկա տվյալների: Ընդ որում, սույն պայմանագրի հաստատումը Օգտատիրոջ կողմից հանդիսանում է վերջինիս համաձայնությունը՝ «ԷԿԵՆԳ» խկորոշման համակարգի միջոցով տվյալ օգտատիրոջ վերաբերյալ հարցումներ կատարելու, անձնական տվյալներ ստանալու, մշակելու, պահպանելու, փոխանցելու համար:

4.5. Եթե «ԷԿԵՆԳ» խկորոշման համակարգի տվյալների համապատասխան բազաներում առկա չէ Օգտատիրոջ ՀՄՀ-ն, ապա առցանց նույնականացման գործընթացը համարվում է ընդհատված: Տվյալ դեպքում Օգտատերը պարտավոր է ժամանել Համակարգի Օպերատորի գլխամասային գրասենյակ կամ Համակարգի Օպերատորի մասնաճյուղեր (ցանկը և հասցեները ներկայացված են Համակարգի Օպերատորի կայքում www.easypay.am)՝ տեղում նույնականացումն անցնելու համար:

4.6. «ԷԿԵՆԳ» խկորոշման համակարգի միջոցով համապատասխան տվյալները Համակարգի Օպերատորի կողմից ստանալուց հետո Օգտատերը ստանում է ինֆորմացիա հրահանգ տեղում ինֆորմալուսանկար կատարելու և այն ներբեռնելու համար:

4.7. Սույն գլխի 3.3 կետում նշված և Օգտատիրոջ կողմից ներբեռնված անձը հաստատող փաստաթղթում պատկերված լուսանկարը Համակարգի Օպերատորի կողմից համեմատվում է 3.6 կետում նշված ինֆորմալուսանկարի հետ: Լուսանկարներին նույն անձի պատկերված լինելու պարագայում Օգտատերը համարվում է նույնականացված՝ ըստ անձը հաստատող փաստաթղթի: ՀՀ ֆաղափացի չհանդիսացող, սակայն ՀՀ-ում կացության կարգավիճակ և ՀՄՀ ունեցող կամ կացության կարգավիճակ չունեցող, սակայն ՀՄՀ ստացած օտարերկրացիները կարող են սույն պայմանների 3.3-3.6 կետերով սահմանված կարգով նույնականացվել՝ Համակարգի Օպերատորի կողմից լրացուցիչ պայմանների ու պահանջների կիրառմամբ, որոնց մասին օտարերկրացի Հաճախորդը ծանուցվում է լրացուցիչ: Սույն կետով սահմանված օտարերկրացի առանձին խմբի Հաճախորդների նույնականացման գործընթացը կարող է սահմանափակվել կամ չկիրառվել Համակարգի Օպերատորի հայեցողությամբ, ինչպես նաև կարող են կիրառվել այլ սահմանափակումներ:

4.8. Էլեկտրոնային եղանակով Հաճախորդին նույնականացնելու և Հաշվառման հաշվի կառավարումը թույլատրելու համար Հաճախորդին կարող են տրամադրվել համարներ, կոդեր, Գաղտնաբառեր, Փին կամ այլ վավերապայմաններ:

4.9. Հաշիվը կառավարվում է բջջային հավելվածի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ:

4.10. Թուրաճաճյուր Էլեկտրոնային փոստի հասցե կամ բջջային հեռախոսահամար կարող է օգտագործվել միայն մեկ Հաշվառման հաշվով Ծառայություններ ստանալու համար՝ Համակարգի Օպերատորի կողմից այլ պայմաններ կիրառված չլինելու դեպքում: Ընդ որում, Հաճախորդի կողմից նշված Էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով Համակարգի Օպերատորին ուղարկված հաղորդագրությունները՝ ներառյալ դիմումները, պահանջները, գնահատվելու են որպես ուղարկված Հաճախորդի կողմից և դրանց կարող է ընթացք տրվել Համակարգի Օպերատորի կողմից առանց Հաճախորդի կողմի ուղարկված լինելու փաստի լրացուցիչ ստուգման:

4.11. Համակարգի Օպերատորն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափահասության տարիքը չբոլորած Հաճախորդից պահանջել, որպեսզի իր գործողությունները հաստատվեն նրա օրինական ներկայացուցչի կողմից, եթե առկա չեն իրավական հիմքեր Հաճախորդին լրիվ գործունակ ճանաչելու համար:

4.12. Հաճախորդից և հօգուտ վերջինիս երրորդ անձանցից ստացված անկանխիկ դրամի դիմաց Համակարգի Օպերատորը թողարկում է Էլեկտրոնային փողի միավորներ և հաշվեգրում է այն Հաճախորդի Հաշվառման հաշվին՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդի Հաշվառման հաշիվը կարող է համալրվել նաև այլ Հաճախորդների Հաշվառման հաշիվներից փոխանցված միջոցների հաշվին, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ եղանակներով:

4.13. Համակարգի Օպերատորի կողմից թողարկված Իզի Ուալլերի միավորների գործողության ժամկետը չի սահմանափակվում, բացառությամբ Պայմանագրի 3.12 կետով սահմանված դեպքերի:

4.14. Փոխանցում, վճարում կամ մարում կատարելու Հաճախորդի կարգադրությունը կատարվում է միայն այն դեպքում, եթե Հաշվառման հաշվի մնացորդը բավարար է Հաճախորդի կարգադրությունն ամբողջ ծավալով կատարելու համար՝ հաշվի առնելով նաև Համակարգի Օպերատորի վարձատրությունը: Այլապես նման գործառնությունների կատարումը մերժվում է: Գործառնությունների կատարումը կարող է մերժվել Համակարգի Օպերատորի կողմից նաև այն դեպքերում, եթե.

4.14.1. դրանց կատարման արդյունքում կարող է խախտվել օրենսդրությունը կամ Համակարգի Օպերատորի կողմից սահմանված

պահանջները (այդ թվում՝ խախտվել Համակարգի Օպերատորին կամ երրորդ անձի իրավունքները կամ օրինական շահերը),

4.14.2. դրանց կատարումը հնարավոր չէ Համակարգի Օպերատորից անկախ պատճառով,

4.14.3. օրենսդրությամբ կամ Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

4.15. Հաճախորդը կարող է Համակարգի Օպերատորի կողմից սահմանված կարգով Ծառայություններ Մատուցողներին տալ Հաժվից անակցեպտ գանձում կատարելու իրավունք, և նման դեպքում անակցեպտ գանձման պահանջները ենթակա կլինեն կատարման նույն եղանակով, ինչպես դրանք այլապես կկատարվեն Հաճախորդից համապատասխան կարգադրություններ ստանալու դեպքում:

4.16. Համակարգի Օպերատորի սխալի պատճառով Հաճախորդի Հաժվին հաժվեգրված գումարները /այդ թվում՝ ավել գումարները/ կարող են Համակարգի Օպերատորի կողմից անակցեպտ կարգով հետ գանձվել Հաժվից՝ ծանուցելով Հաճախորդին: Եթե Հաժվի մնացորդը բավարար չէ սխալմամբ հաժվեգրված գումարն ամբողջությամբ վերականգնելու համար, Համակարգի Օպերատորը ոչ ուշ, քան սխալը թույլ տալու օրվանից հաժված 30 /երեսուն/ օրացուցային օրվա ընթացքում Հաճախորդին ներկայացնում է տարբերությունը վերադարձնելու պահանջ, և Հաճախորդը պարտավոր է 15 /տասնհինգ/ օրացուցային օրվա ընթացքում վերադարձնել համապատասխան գումարը:

4.17. Հաճախորդը պարտավոր է լինել բարեխիղճ և համաձայնել վերադարձնել երրորդ անձանց կողմից իր Հաժվին սխալմամբ փոխանցված/վճարված գումարները, բացառությամբ այն դեպքերի, երբ նման երրորդ անձինք ունեն դրամական պարտավորություն Հաճախորդի նկատմամբ կամ նման պարտավորություն կառաջանա գումարների վերադարձման դեպքում:

4.18. Հաճախորդի կողմից սխալմամբ մեկ այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի փոխանցված/վճարված միջոցները կարող են հետ վերադարձվել միայն այդ այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի համաձայնությամբ:

4.19. Այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի փոխանցում/վճարում կատարելու մասին Հաճախորդի կարգադրությունը համարվում է Համակարգի Օպերատորի կողմից կատարված այն պահից, երբ համապատասխան միջոցները դուրս են գրվում փոխանցում/վճարում կատարող Հաճախորդի Իզի Ուալլեթից և հաժվեգրվում են ստացող Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի Իզի Ուալլեթին:

4.20. Այլ ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվող հաժիվներին և/կամ հաճախորդներին ոչ առցանց փոխանցում կատարելու մասին Հաճախորդի կարգադրությունը համարվում է Համակարգի Օպերատորի կողմից կատարված այն պահից, երբ համապատասխան միջոցները դուրս են գրվում փոխանցող Հաճախորդի Հաժվուման հաժվից, փոխարկվում Համակարգի Օպերատորի կողմից և նման այլ կազմակերպությանը փոխանցելու նպատակով դուրս գրվում Համակարգի Օպերատորի բանկային հաժվից՝ գործարքի անհրաժեշտ մանրամասները պարունակող կարգադրությամբ:

4.21. Պայմանագրի լուծման դեպքում Համակարգի Օպերատորը Հաճախորդի պահանջով մարում է Իզի Ուալլեթի դրական մնացորդը կամ փոխանցում է այն այլ Հաճախորդի Իզի Ուալլեթին՝ համապատասխան Սակագների և այլ պայմանների կիրառմամբ:

4.22. Համակարգի Օպերատորի և Հաճախորդի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Հաճախորդին մատուցած Ծառայությունների համար Համակարգի Օպերատորը Հաճախորդից ստանում է վարձատրություն՝ համաձայն սակագների՝ անակցեպտ կարգով գանձելով այն Հաճախորդի Հաժվուման հաժվից:

4.23. Հաժվուման հաժվով կատարված բոլոր գործարքների մասին անհրաժեշտ տվյալներն արտացոլվում են բջջային հավելվածի Պատմություն Բաժնում, իսկ նախատեսված դեպքերում դրանց մասին հաղորդագրություն է ուղարկվում Հաճախորդի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին և/կամ բջջային հեռախոսահամարին:

4.24. Ծառայությունների հասանելիության և կատարման ժամերը սահմանվում են Ծառայություններից Օգտվելու Կանոններով:

5. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

5.1. Հաճախորդն իրավունք ունի՝

- 5.1.1. օգտվել Ծառայություններից Պայմանագրի պայմաններին համապատասխան,
- 5.1.2. ստանալ տեղեկատվություն առաջարկվող Ծառայությունների, դրանց նկատմամբ կիրառվող սակագների և այլ պայմանների մասին,
- 5.1.3. ստանալ տեղեկատվություն Հաժվով կատարված բոլոր գործառնությունների վերաբերյալ,
- 5.1.4. Պայմանագրով նախատեսված կարգով ցանկացած ժամանակ պահանջել Համակարգի Օպերատորից մարել կամ այլ կերպ տնօրինել Հաժվի մնացորդը՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան,
- 5.1.5. Համակարգի Օպերատորին ներկայացնել դիմումներ ու բողոքներ՝ Պայմանագրով և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

5.2. Հաճախորդը պարտավոր է՝

- 5.2.1. Համակարգի Օպերատորին տրամադրել հսկայական տեղեկատվություն և վավեր փաստաթղթեր /բնօրինակի պատճեններ/, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Համակարգի Օպերատորին այդ տեղեկատվության փոփոխման դեպքում,

- 5.2.2. Ծառայություններից օգտվել անձամբ և բացառապես օրինական նպատակների համար: Հաճախորդը պատասխանատվություն է կրում նաև երրորդ անձանց իր Հաշվառման հաշվի սվյալների տրամադման և, հետևաբար, երրորդ անձանց կողմից իր Հաշվառման հաշվի մնացորդի և/կամ Հաշվին կցված բանկային ֆարտին/ֆարտերին/հաշվին/հաշիվներին/ հասանելի միջոցների օգտագործման կատարված գործարքների համար:
- 5.2.3. Ձեռնպահ մնալ Համակարգի Օպերատորի պաշտոնական կայքէջ կամ Հաշվի կառավարման համար օգտագործվող այլ միջոցները Պայմանագրով չնախատեսված որևէ եղանակով օգտագործելուց, Պարբերաբար ստուգել պաշտոնական կայքի Անձնական Բաժնուն գետեղված տեղեկատվությունը,
- 5.2.4. Անմիջապես հայտնել Համակարգի Օպերատորին հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունների և արտասովոր հանգամանքների մասին և, մասնավորապես, բջջային հավելվածի որևէ ծանուցման կամ կարգադրության սխալ լինելու կամ արտացոլված չլինելու դեպքում,
- 5.2.5. Ապահովել Հաշվի կառավարման վավերացման գործընթացի /Գաղտնաբաց, Փին/ գաղտնիությունը և պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից,
- 5.2.6. Հաշվի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի փոփոխման, կորստի կամ այլ կերպով Հաճախորդի տիրապետումից դուրս գալու դեպքում՝ անհապաղ տեղեկացնել Համակարգի Օպերատորին՝ վերջինիս Թեժ Գծի ծառայության միջոցով կամ անձամբ ներկայանալով Համակարգի Օպերատորի մասնաճյուղ:
- 5.2.7. Օգտատիրոջ կողմից նույնականացման համար հիմք ծառայած անձը հաստատող փաստաթղթի փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել Համակարգի Օպերատորին՝ տրամադրելով անձը հաստատող փոփոխված փաստաթղթի կրկնօրինակը: Սույն կետով սահմանված պարտավորությունը պատճառ կարգով չկատարելուց կամ պատճառ կարգով չկատարելուց բխող բոլոր ռիսկերը կրում է Հաճախորդը:

5.3. Համակարգի Օպերատորն իրավունք ունի.

- 5.3.1. մերժել որևէ գործարք և կասեցնել բոլոր Ծառայությունները կամ դրանց որևէ մասը՝ սխալ, խախտում կամ կեղծիք հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ Համակարգի Օպերատորի մոտ կասկած է հարուցում գործարքի օրինականությունը կամ Հաշվառման հաշվի կառավարման վավերացման գործընթացի պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից, անակցեպտ կարգով գանձել Հաճախորդի հաշվառման հաշվին առկա ֆինանսական միջոցները՝ ի մարում Հաճախորդի կողմից Համակարգի Օպերատորի նկատմամբ ձևավորված պարտավորության և/կամ պատճառված վնասի հատուցման,
- 5.3.2. Արգելափակել Հաշվառման հաշվի կառավարման վավերացման գործընթացի /այդ թվում՝ նույնականացուցիչները/ և/կամ/ պահանջել Հաճախորդից փոփոխել դրանք /եթե Հաշվի կառավարման վավերացման գործընթացի պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից Համակարգի Օպերատորի մոտ կասկած է հարուցում կամ առկա է հավաստի փաստաթուղթ, որ դրանք պատկանում են/ այլ անձի,
- 5.3.3. Հաճախորդի կողմից այնպիսի գործողություններ թույլ տրվելու դեպքում, որոնց արդյունքում կարող է վնաս պատճառվել Համակարգի Օպերատորին, երրորդ անձի կամ պետությանը, նման գործողությունը հայտնաբերելու պահից հաշված 1 (մեկ) ամսվա ընթացքում մերժել Հաշվից մարում, փոխանցում կամ վճարում կատարելու Հաճախորդի կարգադրությունները և պահանջները, կասեցնել Ծառայությունները, եթե դա անհրաժեշտ է Համակարգի Օպերատորի, Հաճախորդի, երրորդ անձանց կամ պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կամ սույն կետով սահմանված կասկածելի իրավիճակի էական պայմանների որոշակիացման համար,
- 5.3.4. Դադարեցնել Ծառայությունների մատուցումը՝ Պայմանագրի լուծման մասին Հաճախորդին ծանուցելու պահից,
- 5.3.5. Ձեռք բերել, մշակել և պահպանել տեղեկատվություն Հաշվառման հաշվի կառավարման համար օգտագործվող տեխնիկական միջոցների մասին,
- 5.3.6. Էլեկտրոնային օրենսդրության փոփոխությունից կամ տեխնիկական անհրաժեշտությունից՝ փոփոխել Հաշվառման հաշվի նույնականացուցիչներին ներկայացվող պահանջները կամ այլ պայմանները՝ նախօրոք այդ մասին ծանուցելով Հաճախորդին:
- 5.3.7. Հաճախորդների և նրանց նույնականացնող փաստաթղթերի սվյալների պարբերական մոնիտորինգի ընթացքում հայտնաբերված վավերականության ժամկետը լրացած անձը հաստատող փաստաթղթերով Օգտատերերին տեղեկացնել փոփոխված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության մասին:

5.3.8. Գործարքների կատարման համար ներդրել լրացուցիչ պաշտպանական գործիքներ:

5.3.9. Ստեղծել Հաշվառման հաշվին առկա մնացորդի գումարի չափը և կասեցնել Ծառայությունները մինչև 30 /երեսուն/ օր ժամկետով Հաշվառման հաշվի միջոցով որևէ ոչ իրավաչափ գործողության կասկածի դեպքում: Սույն կետով սահմանված ժամկետը կարող է միակողմանիորեն երկարաձգվել՝ համապատասխան հիմքերի և հիմնավորումների առկայության դեպքում, որոնց մասին Հաճախորդը ծանուցվում է:

5.4. Համակարգի Օպերատորը պարտավոր է՝

5.4.1. սահմանել Օգտագործողի նույնականացման պատճառ ուսումնասիրության ընթացակարգ՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտի միջոցով նույնականացման ընթացակարգի՝ բացառությամբ Ֆինանսական Միջոցառումների Աշխատանքային Խմբի (FATF) կողմից հրապարակված բարձր ռիսկային երկրների առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի:

5.4.2. Գործադրել անհրաժեշտ միջոցներ առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում Ծառայություններից օգտվելու հնարավորությունը և Ծառայությունների պատճառ որակն ապահովելու համար:

5.4.3. Հաճախորդին տրամադրել տեղեկատվություն Հաշվառման հաշվից կատարված գործարքների և Հաշվառման հաշվում առկա մնացորդի վերաբերյալ:

5.4.4. Կանխավճարը Օգտագործողի կողմից բանկային փոխանցման միջոցով կատարելու դեպքում՝ բանկային փոխանցման փաստաթղթում նշված տվյալները Համակարգի Օպերատորի մոտ եղած տվյալների հետ չհամապատասխանելու դեպքում փոխանցված գումարը հետ փոխանցել այդ փաստաթղթերում նշված վավերապայմաններով կամ կապ հաստատել Օգտագործողի հետ տվյալների ճշգրտման և գործարքի դրական ավարտի ապահովման համար:

5.4.5. Միջոցներ ձեռնարկել «Իգի Փեյ» ԷՎՀ-ի միջոցով փոխանակվող ինֆորմացիայի գաղտնիության և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից պաշտպանելու ուղղությամբ:

5.4.6. Վեբերի ծագման դեպքում՝ Օգտագործողի խնդրանքով տրամադրել կնիքով հաստատված տեղեկանք Օգտագործողի կողմից ԷՎՀ-ի միջոցով կատարված գործարքի մասին և ԷՎՀ-ի կողմից համապատասխան ապրանքի և/կամ ծառայության դիմաց փաստացի կատարված վճարման մասին

5.4.7. Օգտագործողին տեղեկացնել բոլոր այն հանգամանքների առաջացման, փոփոխման կամ վերացման մասին, որոնք էական նշանակություն ունեն սույն պայմանագրի կատարման համար՝ մասնավորապես Պաշտոնական կայքում հրապարակել սակագները և պարբերաբար թարմացնել ծառայությունների ցանկը, հրապարակել համակարգի կանոնները և այլն:

5.4.8. Իրականացնել սույն պայմանագրով և Համակարգի Օպերատորի համակարգի կանոններով, այլ իրավական ակտերով սահմանված պարտավորություններ:

6.

Պատասխանատվություն

6.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատճառ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:

6.2. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով փոստային, ինտերնետ և կապի այլ ծառայությունների խափանման, ինչպես նաև Օգտագործողի հետագարծ կապի տվյալների փոփոխման պատճառով Օգտագործողի՝ ժամանակին ծանուցում չստանալու համար:

6.3. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կապի, էներգամատակարարման և տեխնիկական այլ խափանումների պատճառով չկատարելու համար:

6.4. Հաշվառման հաշվի կառավարման վավերապայմանների կորստյան, ինչպես նաև դրանք երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքերում, Հաճախորդը պարտավոր է Համակարգի Օպերատորի կողմից սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել վերջինին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Հաճախորդը կրում է դրանց չարտոնված օգտագործման անբարենպաստ հետևանքների ռիսկերը, այդ թվում, կրում է պատասխանատվություն Համակարգի Օպերատորին պատճառված վնասների համար:

6.5. Համակարգի Օպերատորը չի կրում Հաճախորդի և երրորդ անձանց, այդ թվում, Ծառայություն Մատուցողների միջև հարաբերությունների բնույթը և դրանց օրինակաւորությունը ստուգելու պարտավորություն:

6.6. Այլ բան հստակ սահմանված չլինելու դեպքում, Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայություն Մատուցողների պարտավորությունների համար և չի կարող երաշխավորել վերջիններիս կողմից առաջարկվող ծառայությունների համապատասխանությունը

օրենքի պահանջներին կամ դրանց նկարագրությանը, ծառայությունների որակը, քանակը, մատուցման ժամկետները կամ այլ պայմանները: Համապատասխանաբար, Համակարգի Օպերատորը չի ընդունում Ծառայություն Մատուցողների կողմից թույլ տրված հնարավոր խախտումներին վերաբերող բողոքներ կամ կատարված վնասումների վերադարձման պահանջներ:

6.7. Յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի կատարման ընթացքում մյուս Կողմին պատճառված իրական վնասների համար: Կողմերը հրաժարվում են և զերծ են պահում միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Համակարգի Օպերատորի պատասխանատվության չափը ցանկացած դեպքում չի կարող գերազանցել նման պատասխանատվության առաջացման համար հիմք ծառայած հանգամանքի տեղի ունենալու պահի դրությամբ Հաշվի մնացորդի չափը:

6.8. Համակարգի Օպերատորը պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած խախտումների, սխալների և իրավախախտ գործողությունների համար, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված հիմքերով, այդ թվում՝ Համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամանակ՝ Ծառայությունները կասեցնելու կամ դադարեցնելու ցանկացած հետևանքների համար:

6.9. Հաճախորդը ինֆորմացիոն է կրում բոլոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Համակարգի Օպերատորի կողմից սահմանված պայմանները խախտելու, ինչպես նաև վերջինիս խորհուրդներին և ցուցումներին չհետևելու արդյունքում:

7. Գաղտնիություն

7.1. Կողմերն ապահովում են Պայմանագրի շրջանակներում միմյանց միջև փոխանակվող տեղեկատվության պաշտպանվածությունը:

7.2. Համակարգի Օպերատորն ապահովում է Հաճախորդի անձնական տվյալների, Հաշվով կատարված գործարքների, Հաշվի մնացորդի և այլ տեղեկատվության գաղտնիությունը: Տեղեկատվությունը կարող է բացահայտվել Համակարգի Օպերատորի կողմից միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման կամ Համակարգի Օպերատորի խախտված իրավունքի պաշտպանության (*այդ թվում դատական պաշտպանության) համար: Բոլոր այլ դեպքերում տեղեկատվությունը կարող է բացահայտվել Համակարգի Օպերատորի կողմից միայն Հաճախորդի համաձայնությամբ:

7.3. Համակարգի Օպերատորն իրավունք ունի վնասում ստացող անձին բացահայտել վերջինիս օգտին վնասում կատարած անձի անձնական տվյալները և վնասման գործարքին վերաբերող մանրամասները վնասումը ստացողի գրավոր պահանջի և վնասում կատարողի համաձայնության առկայության դեպքում:

7.4. Պայմանագրի նպատակների համար գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը կարող էր ստացվել այլ օրինական եղանակով, առանց գաղտնիության պահանջների խախտման:

7.5. Համակարգի Օպերատորը Հաշվառման հաշվով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը, ոլջամտության սկզբունքից ելնելով, պահպանում է համապատասխան Պայմանագրի լուծման ամսաթվից հաշված առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով: Համակարգի Օպերատորը կարող է սահմանափակել պաշտոնական կայքի Անձնական Բաժնում արտացոլվող տեղեկատվության վաղեմությունը սահմանված այլ ժամկետով: Պայմանագրի գործողությունը դադարեցվելուց հետո Հաշվառման հաշվով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը չի պահպանվում Անձնական Բաժնում:

7.6. Բջջային հեռախոսի միջոցով Իզի ՈւալԼԵՐը կառավարելու հնարավորությունից օգտվելու դեպքում, նման ցանկությունը հայտնելու փաստով համարվում է, որ Հաճախորդը լիազորել է Օպերատորին դիմել բջջային կադի համապատասխան օպերատորին կամ այլ անձանց և ստանալ հաստատում առ այն, որ համապատասխան բջջային հեռախոսահամարը հատկացված է Հաճախորդին, ինչպես նաև տեղեկացվել տվյալ հեռախոսահամարի անջատման, փոփոխման, այլ անձի հատկացման կամ դրա սպասարկման պայմանագրի լուծման դեպքերում: Հաճախորդի կողմից բջջային հեռախոսահամարի օգտագործման կասեցման կամ դադարեցման մասին երբեք անձից ստացված տեղեկատվության հիման վրա Համակարգի Օպերատորն իրավունք ունի, սակայն պարտավոր չէ, արգելել բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ Հաշվառման հաշվի կառավարման հնարավորությունը: Համակարգի Օպերատորն իրավունք ունի Հաճախորդից պահանջել գրավոր ապացույց առ այն, որ բջջային հեռախոսահամարը հատկացված է իրեն:

7.7. Հաճախորդը կրում է իր կողմից Համակարգի Օպերատորին տրամադրված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու բացասական հետևանքների ռիսկերը:

8.

Ծանուցումներ

8.1. Պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ բջջային հավելվածի միջոցով:

- 8.2. Բացառապես Հաճախորդի հարմարության համար Համակարգի Օպերատորը կարող է նախատեսված դեպքերում ծանուցումների պատճենները կամ դրանց մասին հաղորդագրություններ ուղարկել Հաճախորդի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեով և/կամ բջջային հեռախոսահամարով:
- 8.3. Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ Համակարգի Օպերատորը չի կարող երաշխավորել էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսահամարով ուղարկված հաղորդագրությունների ստացումը Հաճախորդի կողմից:
- 8.4. Որևէ պարագայում Բջջային հավելվածի միջոցով ծանուցում տալու հնարավորություն չունենալու դեպքում, Հաճախորդը, ըստ անհրաժեշտության, պետք է կապ հաստատի Համակարգի Օպերատորի հետ՝ վերջինիս Թեժ Գծի ծառայությանը զանգահարելու կամ Համակարգի Օպերատորի մասնաճյուղ այցելելու միջոցով:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

- 9.1. Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դրա պատճառը անհաղթահարելի իրավիճակներն են՝ հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, կապուղիների, էներգամատակարարման խափանում և Կողմերի վերահսկողությունից դուրս գտնվող այլ իրավիճակներ, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների որոշումների և իրավական այլ ակտերի ընդունման դեպքում, որոնք խոչընդոտում են Պայմանագրով Կողմերի պարտավորությունների կատարումը:
- 9.2. Կողմերի վերահսկողությունից դուրս իրավիճակ է համարվում նաև Համակարգի Օպերատորի կամից անկախ պատճառով կապի խափանման հետևանքով Համակարգի աշխատանքի հնարավոր ընդհատումը:

10. Կիրառվող օրենսդրությունը

- 10.1. Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության նյութաիրավական նորմերով:

11. Պայմանագրի լեզուն

- 11.1. Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով և հրապարակվում է ԷՎՀ-ի բջջային հավելվածի գործարկման կարգավորումներով ընտրված լեզվով, սակայն նման թարգմանությունների և հայերեն տարբերակի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

12. Բողոքների ներկայացման և քննարկման կարգը

- 12.1. Հաճախորդը պարտավոր է ստուգել Հաշվառման հաշվով կատարված գործառնությունները և որևէ անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Համակարգի Օպերատորին ծանուցել դրանց մասին վճարման պահից առավելագույնը երկու ամսվա ընթացքում:
- 12.2. Դժգոհություններ կամ առաջարկություններ ունենալու դեպքում՝ Հաճախորդը կարող է դիմել Համակարգի Օպերատորին՝ ներկայացնելով դիմում/բողոք, այդ թվում՝ Համակարգի Օպերատորի էլեկտրոնային փոստի հասցեով, այցելելով Համակարգի Օպերատորի մասնաճյուղ կամ զանգահարելով Համակարգի Օպերատորի Թեժ Գծի ծառայություն:
- 12.3. Համակարգի Օպերատորն ընդունում է Հաճախորդների դիմումների/բողոքների և առաջարկությունների ներկայացման ու քննության ընթացակարգեր, որոնք տեղադրվում են մասնաճյուղներում և Պաշտոնական կայքում:
- 12.4. Համակարգի Օպերատորը պարտավոր է արձագանքել ստացված դիմումներին/բողոքներին և առաջարկություններին՝ իր կողմից ընդունված ընթացակարգերով սահմանված կարգով և ժամկետներում՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:
- 12.5. Հաճախորդի գրավոր դիմումին/բողոքին տրվում է գրավոր պատասխան:

13. Վեճերի լուծման կարգը

- 13.1. Կողմերը պետք է ձգտեն լուծել ծագած վեճերը բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:
- 13.2. Վեճը լուծելու մասին փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում այն լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Պայմանագրի գործողության ժամկետ

- 14.1. Այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:
- 14.2. Պայմանագիրը գործում է մինչև Կողմերի կամ նրանցից որևէ մեկի կողմից դրա լուծումը:
- 14.3. Պայմանագիրը կարող է լուծվել Պայմանագրով նախատեսված դեպքերում:

15. Պայմանագրի պայմանների փոփոխումը

- 15.1. Համակարգի Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ միակողմանի կարգով փոփոխել Պայմանագրի պայմանները՝ հրապարակելով կիրառելի խմբագրությունը Պաշտոնական կայքում: Համակարգի Օպերատորի կողմից Պայմանագրի փոփոխությունների մասին կարող է ներկայացվել լրացուցիչ ծանուցում ԷՎՀ-ի տիրույթում:
- 15.2. Փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդը կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով Համակարգի Օպերատորին:
- 15.3. Պայմանագրի փոփոխությունների հրապարակումից հետո Հաճախման հաշվով որևէ գործարք կատարելու դեպքում նշված փոփոխությունները համարվում են Հաճախորդի կողմից անվերապահորեն ընդունված:
- 15.4. Պայմանագրի որևէ դրույթի անվավեր կամ առոչինչ հանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:
- 15.5. Պայմանագրով չկարգավորված Հնկերության և Օգտատիրոջ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

16. Հնկերության վավերապայմաններ

«Իգի Փեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Իրավաբանական հասցե՝ Բ. Երևան, Իսահակի 26/1

Գործունեության հասցե՝ Բ. Երևան, Ադրնեսի 8/171

ՀՎՀՀ՝ 02258501

Բանկ՝ «ԱՄԻՕ բանկ» ՓԲԸ

Հ/հ՝ 11500323762137

Էլ. հասցե՝ info@easypay.am